ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԳՅՈՒՄՐՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՔՈԼԵՋ»

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО
ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
"ГЮМРИЙСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
ТЕХНИЧЕСКИЙ КОЛЛЕДЖ"

"GYUMRI STATE TECHNICAL COLLEGE" OF THE MINISTRY OF EDUCATION AND SCIENCE REPUBLIC OF ARMENIA

377512 Շիրակի մարզ ք. Գյումրի
Տիգրան Մեծի 29 (+374312) 5-19-00
Ֆաքս (+374312) 5-83-50

377512 Ширакская область г. Гюмри
Тигран Мец 29 (+374312) 5-19-00
Факс (+374312) 5-83-50

Marz Shirak c. Gyumri
Tigran Mets 29 (+374312) 5-19-00
Fax (+374312) 5-83-50

N 0-26 27 փետրվարի 2015թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Գյումրու պետական տեխնիկական քոլեջ>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:
Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «**ԳՊՏՔ-ՇՀԱՊՁԲ-15/2**»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Գյումրի Տիգրան Մեծի 29, մինչև 2015թ. Մարտի 11-ը, ժամը 10:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Է.Գրիգորյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ներկայացնել ք. Գյումրի Տիգրան Մեծի 29, մինչև 2015թ. Մարտի 11-ին, ժամը 10:00-ն: Գնման առարկա է հանդիսանում << Գյումրու պետական տեխնիկական քոլեջ >> ՊՈԱԿ -ի կարիքների համար՝ Վառելիքի ձեռքբերումը:

<< Գյումրու պետական տեխնիկական քոլեջ >> ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ Վառելիքի մատակարարման (որոնք կազմված են՝ 1 չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը ներկայացված են կից ներկայացված պայմանագրի նախագծի N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:
Մասնակիցները հայտով ներկայացնում են նաև իրենց կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական նկարագրերը:
Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակիցների կողմից ներկայացվող փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<< Գյումրու պետական տեխնիկական քոլեջ >> ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ mkhitarsargsyan@yandex.ru:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

**" Գյումրու պետական տեխնիկական քոլեջ "**
**ՊՈԱԿ-ի տնօրեն** **Մ. Սարգսյան**

Կ.Տ